Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի 13-ի
N 29-Ա որոշման

ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ «ԴԵՊԻ ԱՌԱՋ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«13» մայիս, 2022 թ. *Գյումրի, Հայաստանի Հանրապետություն*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքն՝ ի դեմս համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանի և «Դեպի առաջ» բարեգործական հասարակական կազմակերպությունը՝ ի դեմս կազմակերպության համահիմնադիր Փիթր Աբաջյանի (այսուհետ՝ Կողմեր) կնքեցին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի և «Դեպի առաջ» բարեգործական հասարակական կազմակերպության միջև համագործակցության մասին հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույնով Կողմերը համաձայնում են համագործակցել սոցիալ-կրթական և արտադրական ոլորտներում:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Գյումրու համայնքապետարանը պարտավորվում է հատկացնել անավարտ բազմաբնակարան շենք և օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում աջակցել ու օժանդակել հատկացված բազմաբնակարան շենքի լրակառուցման շինարարական աշխատանքներին և անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրման գործընթացին:

«Դեպի առաջ» բարեգործական հասարակական կազմակերպությունը պարտավորվում է ներդնել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ,

լրակառուցել շենքը՝ որպես սոցիալական բնակարաններ և կառուցումից հետո շենքը վերադարձնել համայնքին: Առաջին հարկը թողնվում է ընկերությանը՝ սոցիալ-կրթական և արտադրական նպատակներով օգտագործելու համար:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն Հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն երկու Կողմերի գրավոր համաձայնությամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություններ, որոնք կհանդիսանան սույն Հուշագրի անբաժանելի մասը:

Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում համայնքի ավագանու հետ համաձայնեցնելուց հետո:

Բոլոր վեճերը, որոնք առաջանում են սույն Հուշագրի մեկնաբանման և կիրառման ընթացքում լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով:

Սույն Հուշագիրը կազմված և ստորագրված է երկու լեզուներով՝ հայերեն և անգլերեն, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասար իրավաբանական ուժ:

Կողմերից յուրաքանչյուրին տրվում է սույն Հուշագրի մեկական օրինակ՝ յուրաքանչյուր լեզվով:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ	«ԴԵՊԻ ԱՌԱՋ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՀԻՄՆԱԴԻՐ
ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ	ՓԻԹՐ ԱԲԱՋՅԱՆ